

ՀԱՇԱԿ ՈՍԿԵՂԷՆ ԴՊՐՈՒԹԵԱՆ

ՀԱՆԴԷՍ ԱՄՍՕՐԵԱՅ

ՊԱՏՄԱԿԱՆ, ԳԻՏՆԱԿԱՆ, ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ
ԱՅԼՈՎԲՆ ՀԱՆԴԵՐՁ

ԸՆԴ ԽՆԱՄՈՎ

Ա՝ ՄԱՏԱԹԻԱՅ ԳԱՐԱԳԱՅԵԱՆ ԵՒ Յ՝ ԳՈՒՐԳԵՆԻ

ՏԱՐԻ Բ՝

ԹԻԻ Ը. — 1 ՕԳՈՍՏՈՍ



Ի Կ. ՊՈԼԻՍ

ԱՌ ՏՈՎԱԿԱՆ ԳԱՎԱՅԵԱՆ

1887

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ



ԱԶԳԻ Ի ԽՆԱՄԱԿԱԼԱՅ ՀԱՆԴԻՍԻՍ


ՊԸՏՄԸԿԸՆ

Պատմութիւն Հայ մատենագրութեան Ա. Մ. Գ.
Բնական պատմութիւն Հայոց Ա. Մ. Գ.




ԳԻՏՆԸԿԸՆ

Ընթացք եւ յառաջադիմութիւն Բնախօսութեան Յ. Գ.



ԲԸՆԸՍԻՐԱԿԸՆ

Բանք զՀայ լեզուէ (ԲՆԸ-ԿԸՆ-ԲՆԸ) Պ. Թ.
Աքաղաղ Ա. Մ. Գ.
Առանձինն բանք Հայերէն լեզուի (Գ) Յ. Գ.



ՃԱՇԱԿ

ՌԱՍԿԱԿԱՆ ԳԻՏՈՒԹՅԱՆ

Ա. Զ. Դ.

Ա. — Խնամակալը Հանդիսիս ի հարկէ իմն ազդառնեն առ ամենայն բաժանորդս, ի գաւառս մանաւանդ, որոց չիցէ վճարեալ ցայսօր զգին բաժանորդութեան իւրեանց՝ զի մի ոք կալցի ական յետ այսր ամսոյ ստանալ զՀանդէսս, մինչեւ հատուցէ զպարտս իւր. զի ոմանց այն իմն թուին կամք՝ ընթեռնուլ ձրի զոր ինչ չէ մարթ ածել ի մէջ ձրի։ Դահեկան քսան և հինգ ի տարւոյ զոյզն գինք են, և չէ արժան այսչափ ինչ չնորհաց ական ունել առ ի մէջ կուսէ։

Բ. — Եթէ չիցէ ստացեալ ուրուք ողջ բովանդակ զամենայն օրինակս Ա. և Բ. տարեաց Հանդիսիս, հաճեսցի նշանակել մեզ թղթով ըստ իւրաքանչիւր թուոյ որչափ ինչ պակասին, զի փութասցուք յղել անդրէն զանձնիւր ուրուք զմէն մի օրինակ վրիպեալ։

Գ. — Ի նուազել գրեա թէ ամենայն օրինակաց Հանդիսիս ածելոյ ի լոյս ամսոյ ամսոյ, ջան անդրէն յանձն առեալ ամփոփեցաք ի միում մատենի զերկոտասան թերթս ամսօրեայս զանցելոյ ամին՝ կցելով ընդ միմեանս զիւրաքանչիւր մասունս հատածոց ի գիւրութիւն և յառաւել օգուտ ընթերցանելաց։

Մէն մի օրինակ վաճառի 10 դահեկանի արծաթոյ առ Տ. Յովսէփայ Գավաթեան, ի Կ. Պոլիս։



Պ Ա Տ Մ Ա Կ Ա Ն

ՀԱՅ ՄԱՏԵՆԱԳՐՈՒԹԻՒՆ

ՍԿԶԲԱՆԷ ԱՆՏԻ ՄԻՆՁԵՒ ՅԱՌԱՋԻՆ ԿԷՍ ԱՆԴԻ Ե. ԴԱՐՈՒ

«Իբրեւ յոգւոցն պարգեւ ապաստան եղեւ, սկսաւ խօսել և ասէ ցթագաւորն. «Ա՛յ սէգ, հպարտ և ամբարտաւան, դու զմեզ յայց կենաց աշխարհիս կարճեւ համարիս, իսկ այն որ աշխարհաց թագաւորն է, թէպէտ և մեռանիմք մեք վասն օրինացն, ի կեանսն յաւիտենից ի միւսանգամ ծննդեանն ժամանակի, կենաց ի կեանս դարձուցանէ: Յետ նորա զերրորդն ածին: Զլեզուն խնդրէին, և նա վաղվաղակի մատուցանէր, և զձեռն քաջասիրտս տարածանէր, զի և թագաւորն ինքնին իսկ զարմացեալ լինէր վասն պատանւոյն ուշի մտացն և սրտին քաջութեան, զի առ ոչինչ զցաւսն համարեցաւ: Եւ սա իբրեւ փոխէր, զչորրորդն ի տեղի մատուցեալ՝ ի նոյն տանջանս չարչարէին: Իբրեւ շունչ վախճանին հասանէր, խօսել սկսաւ այսպէս. «Մեզ լաւ է զի փոխիմք աստի ի մարդկանէ, և յուսոյն ակն ունիմք միւսանգամ ծննդեանն յարութեան մեռելոց քան քեզ (լինել) ի կենդանիս, զի արգիլեալ փակեալ է ի քէն յարութիւն մեռելոց: Յետ սորա զհինգերորդն մատուցին ի տանջանս չարչարանացն: Իբրեւ զաչս ի վեր եբարձ հայեցաւ ընդ թագաւորն, սկսաւ խօսել ընդ նմա և ասէ. «Իշխանութիւն առեալ (ի վերայ) մարդկան, և դու մարդ մահկանացու, գործես զինչ և կամիս. բայց մի՛ ի վատութիւն ինչ և զմեր ազգս հատանիցես, կամ լքեալ թողեալ ինչ ի ձեռաց Աստուծոյ համարիցիս: Կաց մնա դու, և տեսցես զզորութիւնս մեծամեծ սքանչելեացն, որպէս զքեզ և զազգատոհմն քո չարաչար հարուածովք չարչարիցէ: Յետ այսորիկ ածեալ եղեւ վեցերորդն, և իբրեւ մերձ եղեւ ի մեռանել, ասէ. «Զի՞ մոլորեալ ես տարապարտուց. ընդ մեզ այս անցք անցանեն վասն մեր մեղաց, զի մեղանչեմք առ Աստուած արժանի զարմանալոյ»

բայց դու մի՛ ական ունիցիս ողջանդամ բարեմիտ ապրել յաստուածամարտ մատուցեալ: , Եւս առաւել բարեաց յիշատակաց արժանի մայրն սքանչելի , որ զայնպիսի զեւթն որդի յիւրմէ կորուսեալ ի միում աւուր ի միում ժամանակի վասն յուսոյն Աստուծոյ՝ քաջալերեալ սրտապնդեալ զմի մի ի նոցանէ , և զսիրտն և զմիտսն զիգուլթեան առնապէս վառեալ , քաջութեամբ յառաջ մատուցեալ ասէր . ‘ Զգիտեմ որպէս դուք յարգադիւս երեւեցարուք , և ոչ ես ինչ զողիսդ և զկեանսդ ձեր շնորհացի , և ոչ զկերպարանսդ ձեր զիւրաքանչիւր ես նկարեցի , և ոչ զհասակսդ ձեր (իմ) ծնեալ և սնուցեալ (է) : Այսուհետեւ ես իմ ինչ ոչ համարեցայց . այլ որ աշխարհի արարիչն է , որ ստեղծ զծնունդս մարդկան , զկեանսդ և զողիսդ ի գալստեան իւրում իւրով ողորմութեամբ ի ձեզ դարձուցանէ : , Անտիոքոս թէպէտ և արհամարհեալ զինքն համարեցաւ վասն բարբառոյ նահատակացն , սակայն մինչդեռ ոգիքն կրտսերոյ մանկանն առ իւր կային , սկսաւ ոչ միայն բանիւք մխիթարութիւն մատուցանել , այլ և արդեամբք հաստատէր ի մեծութիւնս , յաւագութիւնս հասուցանել , երանելի առնել յաշխարհի , միայն թէ ի նախնեացն օրինաց փոխեսցի . գործ ի ձեռն տալ և բարեկամ անուանել թագաւորաց : Իբրեւ ետես թէ ամենեւին պատանին ի բանս թագաւորին ոչ խոտորեցաւ , կոչեաց թագաւորն զմայրն և աղաչէր լինել պատանւոյն կենաց նորին խորհրդական զի փրկեսցի : Իբրեւ կարի շատ ստիպեաց , յանձն առ նա խօսել ընդ որդւոյն . խոնարհեցաւ ի նա , սկսաւ ծաղր առնել զհսլարտ զամբարտաւան թագաւորն և ասէ . ‘ Ողորմեաց ինձ , որդեակ իմ , յուշ լիցի քեզ զի կրեցի զքեզ ինն ամիս յարգանդի , և սնուցի զքեզ զերիս ամս ի գիրկս ստեամբք , և հասուցի զքեզ յայդ չափ մեծութիւն հասակի . արդ աղաչեմ զքեզ , որդեակ , հայեսցիս դու յերկինս և յերկիր և որ ի նոսա արարածք իցեն . յուշ լիցի քեզ զի յոչընչէ արար զնոսա Աստուած . սոյնպէս և ազգք մարդկան ստեղծան ի նմանէ . մի՛ զարհուրիր դու ի չարաշուք դահճէ այտի , այլ եղբարցն արժանի եղեալ ընտրեա զմահ քան զկեանս աշխարհի , զի ընդ այն եղբարս ընկալայց զքեզ ի ձեռն

ողորմութեան մեծին Աստուծոյ : Եւ մինչդեռ մայրն զայն մխիթարութիւնս մատուցանէր ի միտս հաստատունս , սկսաւ խօսել պատանեակն և ասէ . 'Ո՛ւմ կայք , զի՞ յապաղէք . չեմ ինչ լնելոց հրամանի թաղաւորիդ , այլ հրամանաց հնազանդեալ եմ օրինաց հարցն մերոց որ տուան ի ձեռն Մովսիսի : Այլ դու որ զամենայն զչարիսդ խորամանկեցեր ի վերայ որդւոցդ Եբրայեցւոց , դու ոչ ապրեսցիս ի ձեռաց Աստուծոյ . զի եթէ առ խրատու պատուհասի Տէր մեր առ փոքր մի ինչ բարկացեալ իցէ , դարձեալ հաճեսցի ողորմութեամբ ընդ ծառայս իւր : Այլ դու , անօրէն , ապստամբ , պիղծ , վատ աւրանց , զի՞ զուր հպարտանաս յուսով քոյով սնոտեալ ի վերայ ծառայից նորա . սակայն չես ինչ ապրելոց յամենադէտ յամենակալ դատաստանացն Աստուծոյ : Զի այժմիկ մեր եղբարք սակաւ ինչ ցաւոց համբերեալ վասն կենացն յաւիտենից , ի վերայ ուխտի կտակարանացն Աստուծոյ անկեալ կան մահու տարածեալ . և ես որ հաւասար եղբարցն իմոց զչունչ և զմարմին մատնել պատրաստեալ ունիմ ի վերայ հարցն օրինաց , յուսացեալ կարդամ առ Աստուած քաւութիւն ազգին ամենայնի գտանել , և զքեզ մեծամեծ տանջանօք հեծութեամբ (տալ) խոստովանել , զի նա միայն է Աստուած և այլ ոք չիք : Յայնչափ քաջութենէ սրտի մանկանցն եւթանեցունց սրտաբեկ լինէր թաղաւորն , և առաւել ի վերայ կրտսերոյն դառնապէս տանջանս մատուցանէին . սակայն և սա անարատութեամբ յուսացեալ ի Տէր մեկնեցաւ յաշխարհէ : Զհետ որդւոցն և մայրն երանելի ի նոյն օրէնս կատարեցաւ : »

Անտիոքոս հարեալ չարաչար հարուածովք սատակի :

« Ընդ այն ժամանակս զէպ կղեւ դառնալ Անտիոքայ մեծաւ անարգանօք ի կողմանցն Պարսից . քանզի երթեալ էր նա ի քաղաքն ի բուն նոցա : Խորհեցաւ ձեռն արկանել զգանձիւն , և , եթէ հնարեսցի , զքաղաքն իսկ աւերել ջանայր : Իբրեւ զայն զգացին զօրք քաղաքին , առ հասարակ ի զէնս իւրեանց ընթացան , և զայն որ մեծաւ սաստկութեամբ ի վերայ երթեալ էր՝ անարժան կորակոր յանձանց ի բաց մերժէին : Իբրեւ չու առնէր , խաղայր գնայր ամօթալից Անտիոքոս ի կողմանցն Պարսից , գայր հասանէր ի կողմանս Եկ-

բատանայ, զմտաւ ածէր զստահակութիւն քաղաքացւոցն որ զնա ի փախուստ դարձուցին: Լցեալ սրտմտութեամբ՝ զմտաւ եւս ածէր յերուսաղեմացիս անդր յազեցուցանել զսրտմտութիւն բարկութեան իւրոյ . վասն այսորիկ հրաման տայր կառավարին ստէպ տագնապաւ անդադար վարել՝ միտ եղեալ ճանապարհին: Մեծամեծս փքայր ի հպարտութիւն ամբարտաւանութեան իւրոյ, և ասէր անմարդի զերուսաղէմ՝ Հրէից հասուցանել: Իսկ ամենակալ Բարձրեալն, Տէր Աստուած Իսրայելի, եհար զնա աներեւոյթ հարուածովք: Այն ինչ բանքն ի բերան նորա էին, ցաւք սաստիկք և անհնարին ոսկերաց ի վերայ հասանէին, և դառնութեան խիթք ի փորն անկանէին: Եւ կարի յիրաւունս . զի որ բազում նորանոր չարաչար ցաւս յայլոց մարմինս տանջանօք հասուցանէր, ինքն նոյն սաստկութեան ցաւօք անկեալ պաշարեալ դնէր: Սակայն և այնպէս ոչ կասէր ի հպարտութենէ անտի, այլ առաւել բորբոքէր ամբարտաւանութեամբ ի վերայ Հերբայեցւոց . ստիպէր ճեպել ի ճանապարհ, մինչ դէպ եղեւ նմա անկանել ի կառաց անտի, մինչդեռ գայր նա տագնապաւ: »

(Մատոռոսի յառաջ)

Ա. Մ. Գ.

Ունիմք ի մտի մերոյ քննական պատմութեան Հայոց յերկրորդ մասնէ անտի որ չէ տակաւին ընծայեալ ի լոյս, (և ընծայեսցի թերեւս, եթէ ժամանակն և դէպք լիցին նպաստաւոր,) դնել ի Հանդիսիս հատուածս ինչ առ ի տալ քննասիրաց առհաւատչեայ իմն հանգամանաց գործոյն: Այս մասն ունի տալ ըստ մերում խոստման զպատմականն ժամանակ մերոյ տոհմային պատմութեան, զոր առեալ ի Տիգրանայ Մեծէ տարցուք հասուցանել առ այժմ՝ մինչեւ ի մարզպանութիւն անդր Վահանայ Մամիկոնենի, զի անտի և այսր դարձեալ ժամանակս ինչ դադարեն, աւելի քան մի դար և կէս, աղբերք ժամանակակիցք, և՛ տոհմայինքն և՛ արտաքինք, և մատուցանել զգործն անտի յառաջ մինչեւ ի մեր աւուրս՝ լիցի այլոյ ժամանակի գործ, եթէ կեանք բաւիցեն մեզ, և լիցի հնար զպայմանսն կարեւորս հայթայթել ի կատարումն այլոցն եւս մասանց: Ահաւասիկ սկիզբն.

ՔՆՆԱԿԱՆ ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ՀԱՅՈՑ

Ման Բ., Դպրանիւն Ա. ի Տէգրանայ Մեծէ Բնէլ ի Տարդանոս-
նիւն Վահանայ Մաթիւնէն, Կամ, Եսէ անոր Էքր 90 Ն. Ժ. ՉԲ.,
Բնէլ ցած 488, որ է սկիզբն Խաչատուրան Վաղարշու Սասանեանց :

Արշակունի, այլով անուամբ՝ ոստանիկ, այն է արքուն-
ական ցեղն Հայոց, էր, որպէս թուի, սերունդ հին Արա-
րատեան թագաւորութեան, որ, յետ կորուսանելոյ զտէրու-
թիւնն ամս իբրեւ երեքհարիւր, այն է ի Գարեհէ Վշտասպեայ
(500 Ն. ք. զԲր.) մինչեւ ցԱնտիոքոս Մեծ, էառ զինքնօրէն
աղիկամութիւնն (189 Ն. ք. զԲր.) Արտաշիսիւ, կամ, յոյն
յորջորջամբ, Արտաքսիասաւ, անդէն իսկ յԱրարատեան
երկրին, կամ, « ի հովտին Երասխայ » (Ստր. ԺԱ. 14. 2,3.)
ուստի և յիրաւի կոչի ի Բուզանդայ երկրորդ « Արարատեան
թագաւորութիւն » (Բուզ. Գ. Ժ.) : Այսպէս, ըստ մեզ,
ճշդագոյն և միաբան ընդ պատմութեան է կոչել զնա Վերսիւն
հասարակութիւն հին Արարատեան թագաւորութեան, քան
դուստր պարթեւականին, որպէս երեւցողցանէ Խորենացին :

Թագաւորութիւնն Արշակունեաց, թէպէտ և սկսաւ հին
Արարատեան ցեղիւ, չտեւեաց սակայն ի նմին ցեղի որդի
ի հօրէ մինչեւ ի վերջին համանուն թագաւորն Արտաշէս,
որպէս տայ կարծել դարձեալ նոյն Խորենացին, ըստ օրի-
նակին Յուդայի թագաւորութեան որ տեւեաց ի միում և
ի նմին ցեղի ի Դաւթայ մինչեւ ի վերջին շառաւիղ նորա
Սեդեկիա :

Թագաւորութիւնն Արշակունեաց, որ տեւեաց զամս ի-
բրեւ 600 (189 է Ն. ք. զԲր. — 428 յետ Քր. ի.) ունի երիս ժա-
մանակս կամ դար յընդարձակ միտս . յառաջնումն տոհմն
Արտաքսիասայ տիրէ միահեծան յիւրմէ հաստատութենէն
(189 Ն. ք. զԲր.) մինչեւ դրեթէ ի սկիզբն քրիստոնէական
թուականին . Հայ աշխարհի . յերկրորդումն, ի սկզբանէ ան-
տի քրիստոնէական թուականին մինչև ի 105, տիրեն խառն
թագաւորք հայացեալք յայլ և այլ թագաւորական տոհմից,
ի կողմանէ մերթ Պարթեւաց և մերթ Հռոմայեցւոց, մանա-
ւանդ սոցա՝ որոց և հարկատու է թագաւորութիւնն . յեր-

բորգումն տիրէ Պաճլա ցեղն Տրդատ—Արտաշիսիւ (53 կամ 63) մինչեւ ի բարձումն հարստութեանն (428) ի ձեռն երկուց սահմանակից տէրութեանց մեծաց, Հռոմայեցւոցն և Սասանականին, որոց խաղալիկ լեալ էր թագաւորութիւնն գրեթէ յիւրմէ ծննդենէն: Չառաջին երկուս ժամանակս մարթ է կոչել խաճախի հետնորդն, զվերջինն դարձեալ բաժանեալ յերկուս, զառաջին մասն, ի Տրդատ—Արտաշիսէ մինչեւ ի Տրդատ Մեծ, մարթ է կոչել նոյնպէս ժամանակ հեթանոսութեան. զհուսկ վերջինն, որ է ի մեծէն Տրդատայ մինչեւ ի կատարած թագաւորութեանն, խաճախի արտադրութեան, մինչ Հայ ազգն, իբրեւ տէրութիւն, է արդարեւ տկարագոյն, բայց առաւել իրագէտ (conscient) անձին, և բարոյապէս առաւել ազատ, և որով սկսանի հանդերձ հայ դպրութեամբ ազգայինն պատմութիւն, ըստ ոգւոյն քրիստոնէական, բայց ոչ առանց վիպական (légendaire) ձեւոյ: Արչակունեաց թագաւորութեան, իբրեւ իշխանութիւն, իսկութիւնն (caractère), հանդերձ այլովք, էր արեւելեան արձակ միապետութիւն, ուր կամք միապետին էին օրէնք: Թագաւորութիւնն, թէպէտ և ի բնէ բաժանեալ ի գաւառս գաւառս գրեթէ իւրաքանչիւրն ինքնօրէն աղիկամի, ունէր սակայն զայն պայման միութեան որ կոչի արդի լեզուաւ ֆեոդալիզմ (féodal,) և որ էր իսկ սովորական պայման բազմաց ի վաղեմի միապետութեանց: Առանձին առանձին իշխանութիւնք որ կազմէին զայս միութիւն, իբրեւ ճառագայթք անուոյ, երթային միանալ իբրեւ ի կեդրոնի յանձին թագաւորին որ էր « բնակ տէր » երկրին (Բուզ. Գ. Ժ. Գ. Ի. Ե. Ե. այլ հանդ.): և այս ոչ յառաջնում ժամանակին միայն յորում թագաւորութիւնն էր միահեծան (և այս յայտ է ի տիտղոսէն « Արքայից արքայ » ի դահեկանս թագաւորաց արչակունեաց այնր ժամանակի,) այլ և յետոյ եւս մինչ ինքն իսկ թագաւորութիւնն էր սահմանակից մեծ տէրութեանց, մերթ միոյն և մերթ միւսոյն: Չայս աւատային ձեւ ակնարկեն մերով հին լեզուաւ բանք, « ձեռատունկ, ձեռասուն, ձեռակերտ, դաստակերտ: » Այսպէս Տրդատ Մեծ, ի հրովարտակին առ ամենայն Հայս, անուանէ զերկիրն ամենայն յեռա-

դանկ և յեռանան Արչակունեաց . « Ամենայն նախարարք մեծամեծք և ազատք և գործակալք և սիրելիք մեր թագաւորաց . . . յեռադանկ և յեռանան մեր Արչակունեաց » (Ագաթ. ԺԲ.) և Հայոց հրովարտակն կամ նամակ առ Թէոդոս անուանէ զամենայն երկիրն Դասակեր Զոմայեցւոց : « Ունիմք զանսուտ յիշատակարանսն զառաքինի նախնեացն ձերոց , (որք) ունելով զՆւրուպէ՝ անցին և տիրեցին և Ասիացւոց կողմանցն . . . և յայնչափ մեծ իշխանութեան՝ Դասակեր մեծ և սիրելի զՀայոց աշխարհս անուանէին » (Նղիշ. էջ 122, 123) :

Զիշխանութենէ թագաւորին , որպէս ասացաւ ի վերոյ , այսչափ միայն գիտեմք թէ էր արձակ միապետական , և թէ հրաման թագաւորին էր օրէնք : Թէ գոյր արդեօք գէթ ժողով նախարարաց ի մեղմել իմն և ի չափու ունել զիշխանութիւն թագաւորին՝ չէ ուստեք յայտ . նորին հակառակն է մանաւանդ յայտնի . խորհուրդ կամ խրատ նախարարաց էր բարեխօսութիւն միայն կամ աղաչանք : Հրամանք որ ելանէին ի բերանոյ թագաւորին , եւս և անիրաւք , պարտէին իսկոյն և անվրէպ առնուլ կատարումն : Այսպէս Տիրան , թոռն Տրդատայ արքայի , մին ի տկարագոյն թագաւորաց մերոց , տայր սպանանել զԾերունին Դանիէլ , և ոչ իսկ իբրեւ բարեխօսութիւն յարգելով զխրատ աւագանւոյն : « Իբրեւ զայս (զյանդիմանութիւնն Դանիելի) լուաւ (Տիրան ,) » ասէ Բուզանդ , « բորբոքեալ ի բռնաւորութիւն դառնութեան ամբարշտութեան ցասման իւրոյ՝ տայր հրաման անդէն խեղդամահ առնել զնա : Բայց մեծամեծք նախարարացն , աւագանին , շատ եղին ի մոտի արքային զի մի կատարեսցէ զջարութիւն կամաց իւրոց . այլ նա ոչինչ անսաց նոցա . սպասուորքն կատարեցին զգործ հրամանին վաղվաղակի . ճոպան ի փոզս եղեալ խեղդամահ արարին զնա » (Բուզ. Դ. ԺԲ.) : Միով բանիւ թագաւորն էր տէր կենաց և մահու իւրոց հպատակելոց առանց խտրութեան մերձաւորութեան և աստիճանի : Արչակ , թոռնորդին Տրդատայ , տայր հրաման Վարդանայ Մամիկոնենի , եղբօր սպարապետին իւրոյ Վասակայ , սպանանել զԳնէլ որ էր եղբօրորդի նորին իսկ Արչակայ

(Բուզ. Դ. ԺԵ.) • Վասակայ պատուիրէ սպանանել զՎարդան զիւրուրոյն եղբայր , նահապետ Մամիկոնեան տոհմին (Բուզ. Դ. ԺԸ.) • Պապ հրամայէ սպարապետին իւրում Մուշեղայ սպանանել զմարդպետն Հայր (Բուզ. Ե. Գ.) և հրամանքն առնուն անդէն և անդ կատարումն : Եթէ պարտ է հաւատալ աւանդութեան Խորենացւոյն , նոյն Արշակ զհայր իւր գլխովին զՏիրան ետ առնել հեղձամահ սենեկապետաց նորա , թէպէտ և գաղտ • « Հեղձամահ եղեւ (Տիրան) յիւրոց սենեկապետաց ի հրամանէ արքայի ի գաղտնիս » (Խոր. Գ. ԻԲ.) :

(Մատոռացի յառաջ)

Ա. Մ. Գ.

Գ Ի Տ Ն Ա Կ Ա Ն

ԸՆԹԱՑԻ ԵՒ ՅԱՌԱՋԱԴԻՄՈՒԹԻՒՆ

ԲՆԱԽՈՍՈՒԹԵԱՆ

Ի ՎԱՂՈՒՅ ԺԱՄԱՆԱԿԱՑ ԱՆՏԻ ՄԻՆՁԵՒ ՑԱՒՈՒՐՍ ՄԵՐ

Ա.

Եւ այս միտութիւն մտաց մարդոյ , դնել զամենայն ի խորհրդաւոր պատճառաց , այնչափ ինչ ըստ բուսոյ բարուց է , մինչեւ տեւել բաւել այնմ ի բազում տեղիս ցայսօր ժամանակի : Փոխանակ փեքոսի որ առաջնորդէրն Արեգական , այր գիտուն եղ զարդիս զգորութիւն ձգման , որ վարէ գունդ մի հրեղէն հպատակ անփոփոխ օրինաց : Այր գիտուն յափշտակեաց զշանթ ի ձեռաց Արամազդայ , և վանեալ արկ զնեպտոն ի խոնաւական պետութենէ նորա : Այլ վասն ամենայն երեւութից զոր ի միտ առնուլ ոչ կարիցէ՝ յաճախ իմն հնարի տալ մեկնութիւնս ի խորհրդական ինչ զգորութեանց • բնութիւն , ասէ , կամ դիպուած իմն , զորոց սակայն գիտէ և ոչ ինչ :

Գիտնոց որ ի հնումն՝ սակաւ ինչ էր խելամտութիւն անդամադննութեան անասնոց առ հասարակ , և առանձինն՝

անդամազննութեան մարդկեղէն մարմնոց : Հիպոկրատ եղեւ տեղեակ ոսկերախօսութեան եւեթ և ծանեաւ գկայան աղեաց գլխաւորաց : Իսկ բնախօսութիւն էր ամենեւին ի մանկութեան . պաշտամունք ջղաց և երակաց էին ամենեւին անծանօթք :

Այլ Արիստոտ եղեւ խելամուտ ճգրիտ ծանօթութեանց առաւել քան զորս կեցին յառաջագոյն ժամանակօք , եհերձարկ ի զնին զգիականս անասնոց բազմաց , և փորձս իսկ փորձէր զբնախօսութեան :

Երեք հարեւր ամօք յառաջ քան զՔրիստոս , Միւսէոն Աղեքսանդրացւոց քաղաքին , հաստատեալ ի Պտղոմեանց , բովանդակէր ժողովածոյս ոսկերոտոյ և կմախեաց մարդոյ , և էր անդ ուսումն անդամազննութեան : Ի գիտնոց դպրոցին այնորիկ ծանօթ են մեզ անուանք բժշկացն Նրասոսրատեայ և Նրոփիլեայ , որ կացին նշանաւորք ի զննութիւնս յօրինուածոյ ջղաց : Նրասոսրատոս եգիտ ած ի մէջ զմի մասն ուղղոյ , որում ասլա զնոյն անուն դնէին :

Պարտ է հասանել յաւուրս Գաղիանոսի առ ի տեսանել զուսումն անդամազննութեան և զբնախօսութեան ի համարի ճգրիտ գիտութեանց : Գաղիանոս ծնաւ ի Փոքր Ասիա յամին Քրիստոսի հարիւրերորդի երեսներորդի : Այս այր , բնախօս և անդամազնին , առանձինն գիւտոց բազմաց քան զամենայն նախնիս իւր եղեւ հնարագիւտ : Եթէ իցէ հերձեալ զդիս մարդոյ , սակաւ յոյժ թուի հերձեալ . այլ առ ի քնին զանասունս մերձաւորս ազգի մարդկան , և յօրինեաց ճառս ինչ զճարտարութենէ անդամազննութեան , անուն De usu patium (Զպիտանութեմն մասանց մարմնոյ ,) որում ոչ եւ խոյեան առաւել քան զհազար ամ :

Բ .

Ի կործանել տէրութեանն Հռոմայեցւոց ընդ ստէպ հարուածովք բարբարոսաց , գիշեր աղջամղջին պատէր զՆերոպեաւ : Ժողովուրդք նորանորք բնակեալք յաւերակս անդ մեծատարած պետութեանն՝ դարս տասն զհետ լինէին առ ի գոյ ածել քաղաքաւորութիւն նոր և լեզու նորաձայն ի մնացորդաց լեզուին եղծելոյ և քաղաքաւորութեանն նուազելոյ :

Յընթացս դարուցն տասանց տգիտութիւն թանճր և խորին տիրէր միահեծան :

Ի ժամանակս անդ բարբարիկ բարոյից , գիտութիւնք , զորոց դոյզն ինչ կարծիք էին , որպէս անօգուտք կամ վնասակարք մերժեալ լինէին ի նոր իմն վարդապետութենէ կրօնից , և ի իշխստիայք հայէին ի նոսա իբրև յիրս ինչ պերճանաց :

Յուստինիանոս կայսր , պատճառանօք որպէս թէ գիւղապաշտութիւնն բառնալ ի միջոյ կամիցի , տայր տարագիր առնել զարս գիտութեան և փակել զդպրոցս : Սուրբն Գրիգոր համարէր պիղծ զուսումն որպէս ընդդիմակաց կրօնից , և Մեծն Կարողոս , յորժամ զքառասուն ամաց տիովք ընթեռնուլ ուսանել կամէր , հազիւ իմն թէ գտանէր զոք ուսուցիչ :

Անուանք երեք ճոխանային ի Միջին դարու . Արիստոտ ի փիւսկեան և Ի բնական գիտութիւնս , Հիպոկրատ ի բժշկութեան , և Գաղիանոս յանդամազննութեան :

(Մատոռացի յառաջ)

Յ. Գ.

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ԲԱՆՔ ԶՀԱՅ ԼԵԶՈՒԷ

(Թղթակցութիւն)

Յաւուր միում ոմանք ի բարեկամաց մերոց բանասիրաց եկին ի տուն մեր անցուցանել ժամս ինչ պարապոյ ընդ մեզ : Հինգ էին բարեկամքն մեր . Մ. Մ. , Ա. Պ. , Յ. Գ. , Ս. Գ. և Ս. Պ. : Յետ խօսելոյ զօդոյ , զանճրեւէ և զքաղաքական դիպաց ինչ աւուրն՝ գայր անկանէր բանն ի վերայ խնդրոց ինչ լեզուագիտութեան : Բնապէս զտոհմային բարբառոյ մերմէ էին յաճախադոյնս ճառքն . քանզի պայքարն ընդ մէջ երկուց նախանձընդդէմ կողմանց որ տիրենն յասպարիսի մատենագրութեան հնոյն բարբառոյ՝ չէ դադարեալ , այլ արծարծեալ բորբոքեալ կայ տակաւին ողջ անթերի :

Միտ դիցուք այժմ բանակցութեան նոցա :

Ա. Պ. — Միթէ նոր ինչ մատեան ե՞լ յաւուրս յայսոսիկ ի լոյս :

Մ. Մ. — Ոչ գիտեմ, բայց հնար է թէ իցեն մատեանք բազումք ելեալք ի լոյս ի ռամիկ բարբառ անդր, զորս ընթեռնուլ անգամ չեն իմ կամք :

Ա. Պ. — Եթէ զգիտութեանց եւս ճառիցեն, միթէ ընթեռնուլ ո՞չ ակորժիցես :

Մ. Մ. — Այլ է գիտութիւն, և այլ՝ լեզու :

Ա. Պ. — Ասեն թէ ի մօտոյ ելանելոց է ի լոյս մատեան զոր յոյժ դրուատեն, թէպէտ և չիցէ ուրուք տեսեալ զնա : Ծանօթ է մատենագիրն, վասն այնորիկ կանխաւ տան զվճիռն : Դրեալ է, ասեն, կարի նման ոճոյն Նարեկացոյ :

Ա. Գ. — Սքանչելի՛ օրինակ առ ի նմանել :

Մ. Մ. — Թողէ՛ք, բարեկամք, զմատենագիրս յետին դարուց որ այլ ինչ ոչ կարացին առնել, բայց միայն խանգարել զլեզուն :

Յ. Գ. — Մի՛թէ ոմանք ի մատենագրաց հին դարուց, նա՛ հինգերորդ իսկ դարուն ածի՞ն ինչ յարգիւնս . մի՛թէ քան զյետինսն չիցէն նոքա առաւել արժանի պարսաւանաց որ օրինակ չար ետուն զառաջինն ի մոծանել բանս խորթս և ձեւս օտարոտիս, անճահս, խառնեալ աղտ և միուր ի յստակ աղբեւր անդր լեզուին . որպէս Դաւիթ Անյաղթ, ուրեք ուրեք Եղիշէ, Խորենացի, Փարպեցի և այլք յուրվագոյնք :

Մ. Մ. — Եթէ ամենայն գրիչք գրէին որպէս պարտն է և պատշաճ, ապաքէն և ոչ ի միում լեզուի գտանէին խորթութիւնք և անկանոն, անճահ և տգեղ գրածք : Բնական իմն թուի անհաւասարութիւնդ այդ հանճարոյ և մտաց . քանզի և յարարածս բնութեան ոչ ուրեք է տեսանել հաւասարութիւն : Ապա չեն ինչ զարմանք եթէ ի մէջ հարիւր գըրչաց հինգ կամ տասն միայն գտանիցին զարուեստ դպրութեան ի կատարումն հասուցեալ :

Ա. Պ. — Յետին մատենագիրքդ զոր յիշեցեր՝ մի՛թէ եպերեի՞ իցեն բնաւին . չգտանիցի՞ ինչ ի նոսա որ զերծ իցէ ի դսրովանաց :

Յ. Գ. — Այո՛ , գտանին ինչ ինչ որ ոչ են խորթ և ան-
ճահ . սակայն նմանել նոցա յամենայնի չէ՛ պատշաճ , չէ՛ ար-
ժան : Եթէ իցեն ինչ առաւելութիւնք ի նոսա՝ այն պատմու-
թեան անկ է և ոչ յստակութեան և հարազատ , անխառն
կազմածոյ և ազնուութեան լեզուին :

Ա. Պ. — Եթէ զբազումս ի մատենագրաց այսպէս խոտան
արարեալ ի բաց մերժիցեմք և զսակաւս միայն ընտրանաւ
առնուցումք , մի՛թէ զլեզուն ոչ աղքատացուցանեմք :

Մ. Մ. — Ո՛չ երբեք . քանզի մաքրելն և զտել ո՛չ է աղ-
քատացուցանել , որպէս խանգարելն և խառնակել չէ՛ մեծա-
ցուցանել : Ա՛ռ քեզ զՅովհան Խմաստասէր , զՅովհան Կաթու-
ղիկոս , զՄագիստրոս , զՆարեկացի , զԼամբրոնացի , զԱղեւռա-
ցի , զԱսողիկ և զայլ նմանս , և յօրինեա՛ քեզ անտի՛ լեզու որ
կարիցէ զարմանս ազգել և ձգել յինքն մեծարանս անշուք ,
անզարդ , անհամ և դձուճ կերպարանօքն : Մի՛ ինչ զան-
գիտեր , սի՛րելի , թէ՛ աղքատ և չքաւոր Հայ լեզուն ինիցի ,
յորժամ յեկամուտ և յանհեթեթ տգեղ զարդուցն մերկաս-
ցի : Սուրբ գրեանն , և բազում ճառք Սրբոց Հարց Եկեղեց-
ւոյ , և երկու կամ երեք մատենք պատմականք և ընտիրք
զոր ունիմք , և հատակոտորք ինչ խառնեալք ընդ աղաւա-
ղեալ մասունս ճառընտրաց և վարուց Հարանց՝ ծով լայնա-
ծաւալ մատենագրութեան ընծայեցուցանեն առ այնոսիկ ո-
րոց կամք իցեն և կար և ճաշակ յառաջ կոյս և ի կատա-
րումն հասուցանելոյ զբարբառն իւրեանց Նախնեաց :

Ս. Գ. — Ա՛ռ , թողումք զհինս . դիտաւորութիւն մեր
քննել է զայժմու մատենագիրս : Այո՛ , գիտեմք թէ՛ առ
հնովքն գտանին մատենագիրք յոռիք , խոտանք և դանկի
միոյ գինք . սակայն դարձեալ հինքն են օրէնսդիրք մեր
ի մատենագրութեան , մանաւանդ թէ՛ ստեղծիչք տոհմային
լեզուի մերոյ : Զոր ինչ ածին նոքա յարդիւնս ի սակաւ ժա-
մանակի , յորժամ ոչ օրինակք էին ի միջի , ոչ կանոնք կամ
մատեան ինչ դպրութեան , ոչ նիւթական դիւրութիւնք ,
որպէս քարտէս առատ , դիւրագին , և գրիչ և այլ պիտոյք ,
արդարեւ հրաշակերտ մեծ է և արգասիք հզօրագոյն հան-
ճարոյ : Գաղիերէնն , որ պատուականագոյն է ի մէջ լե-

զուաց Եւրոպայ վասն իւրոյ յստակութեանն և ազնուութեան՝ յետ չորից դարուց եհաս յաստիճան անդր կատարման ուր այժմ գտանի . մինչդեռ հայերէնն , որպէս յայտ ի պատմութենէ է , յերեսուն կամ թէ առաւել քառասուն ամաց ժամանակի եկն եհաս ի կատար իւրոյ մեծասքանչ փառաւորութեանն : Չարմանք են յոյժ թէ զիմրդ արք սակաւք , բայց անհնարին հանճարեղք , հանին ի դոյզն ժամանակի ի հրապարակ այնչափ մատեանս ինքնագիրս , սքանչելիս , և թարգմանութիւնս որ գլեն անցանեն քաջ ի բաց գրնագրովքն , վասն մեծատուն ճոխութեան և չքեղ ծաղկալից զարդուցն ասացուածոց : Եթէ մանր ոք քննիցէ , գտանէ նախ ընտրութիւն բանից անստգիւտ և առաւել քան ի քառասուն մատեանս հանգոյն , միաբան . մին ոչ մատն լինի միւսոյն . զոր մին դատապարտէ , զնոյն դատապարտէ և ընկերն . որ ընդունելի միումն է , ընդգրկէ զայն և մեւան : Տացուք օրինակս ինչ . բանքն հրաշ , հաս , Բա որ ի միումն ոչ գտանին , անհնարին է գտանել զնոսա յերեսուն և ինունս անդ : Բայց այլ իմն զարմանալի այն է՝ թէ մինչ բանն հրաշ խոտեալ ընկեցեալ է յամենեցունց , բանն հրաշակեց որ անտի ծնեալ է՝ ընտիր համարի և ի կիր արկեալ է առ բազումս . ուրեմն պարտ է մեզ ասել թէ գաղտնիք ինչ խորին են աստ և խաղ իմն լեզուի նուրբ և փափուկ , զորոյ զպատճառսն չէ մարթ գիտել մեզ այժմ : Ի ժամանակսն յայնոսիկ մինչ բարբառարան (*) չէր ի միջի և չէր իսկ ստեղծեալ յամենայն երկրի , ունէին նոքա ի միտս իւրեանց բարբառարան կենդանի , յորմէ քաղէին առնուին որ ինչ պիտոյ էր նոցա . բայց ըստ սահմանս նորա երեք ոչ ելանէին արտաքս . չէր առ նոսա մարգարիտն և գայռ ի մի համար , որպէս առ նորովք : Յիշեմ աստ զԲաբելոն Հայկազան լեզուի , ուր ի ցանկի մատենագրաց գրեալ է այսպէս .

Եզնիկ . Բուն և հարազատ հայկաբանութիւն .

(*) Պատշաճագոյն թուեցաւ մեզ արկանել գրեւորսն ի կիր . քանզի Dictionnaire ո՛չ քաղուածոյս բանից կամ անուանց միայն նշանակէ , այլ զի եւ զգումարութիւն պէսպէս ասացուածոց եւ այլեւայլ ձեւոց եւ կարգաւորութեան մասանց բանի բովանդակեալ ամփոփէ :

Յաճախապատու՞մ. Բուն և հարազատ հայկաբանութիւն :
Եթէ գերկոսին մատեանս զայսոսիկ , որ այնչափ հակա-
ռակ միմեանց են , ընտրել զատանել ոք ի միմեանց չգիտիցէ
և գերկոսին խառն ի խուռն արկանել կամիցի ի կիր , զի՞նչ
կարծիս մարթիցի կարծել զնմանէ :

Ս. Պ. — Վիճել զճաշակէ այլոց անօգուտ է :

(Մատոռացի յառաջ)

Պ. Թ.

Ա Ք Ա Ղ Ա Ղ

Աքաղաղ քերց իւրոց ամուսին եւ արքայ ,
Խաղայ միշտ յառաջոյ , օրէնքս տայ նոցայ :
Ե՛ւ սիրել ե՛ւ վարել կարէ նա զամս տասն ,
Է՛ ծընեալ սիրելոյ , ծընեալ իշխելոյ վասն :
Ի տարփանս , ի պերճանս զիւր նըման նա չունի ,
Կատար կարմիր պըճնէ ըզճակատն արքունի :
Ի սեաւ ականողեաց կայծակունք արծակին ,
Երփներփըն փետրովք են նըկարէն թեւք , մարմին :
Գըլխոյն թեւք փողփողեալք , լանջք ոսկեգոյն համակ ,
Ոտք նեարդապատք վառեալք յարինեհեղ մըտրակ :
Ըզտըտունն յողանէն ի կատար կոյս տանի
Կամարածեւ , առնել ըզգըլխովն հովանի :
Առ Յոյնս եւ առ Հոռոմս երբեմն էր մեծարոյ ,
Իբրեւ պատգամաւոր սուրբ պատուեալ յԱստուծոյ :
Քայց թող զայն սին պատիւ , զօգուտն առից երգել :
Մինչ այգ նաւթնել ըզտիւ մեզ գայ միշտ անարգել ,
Ըզտանց յարկս , ըզներինս ներկանելով յիւր լոյս ,
Քարոզին արեւու լըսէք դուք ըզխրախոյս :
Կոչէ զնա , աւետէ , փառս առաքէ յերկինս ,
Ըզժամըս գիշերոյ հատանէ ի բաժինս .
Ըզնորա եւ ըզքնոյ ցուցանէ ըզսահման .
Որոշիչ է երկոց , հանգըստեան , արթնութեան .
Սահող ժամանակին է նա կենդանի չափ :
Գու՞ծ նորա միշտ գործօն է միշտ հըսկող անխաբ :
Երանի՛ խըմբին որ է ընդ խնամով նորուն .
Թագաւոր , ամուսին , պաշտպան է նա արթուն :

(ԹԱՐԳՄԱՆՈՒԹԻՒՆ)

Ա. Մ. Գ.

ԱՌԱՆՁԻՆՆ ԲԱՆՔ

ՀԱՅԵՐԻՆ ԼԵՋՈՒԻ

Դ

ԴԱՓՐ ՀԱՏԱՆԵԼ. (31-ը) «Կրօնական» շաբաթը փակելու փոքրիկ ազդուցեր ձեռք զօրութիւն . . . Որոտայ ի դաշտի, և դափր հատանէ:

Ի ԴԵՐԵԻՍ ԵԼԱՆԵԼ. «Կրօնական» շաբաթը փակելու փոքրիկ ազդուցեր ձեռք զօրութիւն . . . ընդ մէջ կտրէ դէպ (միջիւն), զի մի բուս-
ցի ի հիւթոցն խոնաւութեանէ, և վրիպեալ ելանիցէ ի դերեւս:

Ի ԴԵՍՍ. (Դեպք) «Կրօնական» շաբաթը փակելու փոքրիկ ազդուցեր ձեռք զօրութիւն . . . ընդ մէջ կտրէ դէպ (միջիւն), զի մի բուս-
ցի ի հիւթոցն խոնաւութեանէ, և վրիպեալ ելանիցէ ի դերեւս:

ԴԵՍ ԴԵՍԵԼ. «Կրօնական» շաբաթը փակելու փոքրիկ ազդուցեր ձեռք զօրութիւն . . . ընդ մէջ կտրէ դէպ (միջիւն), զի մի բուս-
ցի ի հիւթոցն խոնաւութեանէ, և վրիպեալ ելանիցէ ի դերեւս:

ԴԵՍ ՈՒՆԵԼ. «Կրօնական» շաբաթը փակելու փոքրիկ ազդուցեր ձեռք զօրութիւն . . . ընդ մէջ կտրէ դէպ (միջիւն), զի մի բուս-
ցի ի հիւթոցն խոնաւութեանէ, և վրիպեալ ելանիցէ ի դերեւս:

Ի ԴԵՍ ԴԵՍԵԼ. «Կրօնական» շաբաթը փակելու փոքրիկ ազդուցեր ձեռք զօրութիւն . . . ընդ մէջ կտրէ դէպ (միջիւն), զի մի բուս-
ցի ի հիւթոցն խոնաւութեանէ, և վրիպեալ ելանիցէ ի դերեւս:

ԴԵՍ ԴԵՍԵԼ. «Կրօնական» շաբաթը փակելու փոքրիկ ազդուցեր ձեռք զօրութիւն . . . ընդ մէջ կտրէ դէպ (միջիւն), զի մի բուս-
ցի ի հիւթոցն խոնաւութեանէ, և վրիպեալ ելանիցէ ի դերեւս:

8. Գ.

ԻՆՏԵՐՆԱԿԱԼ ԴԱՆՏԻՍԻՏ

Յ. ԳՈՒՐԳԵՆ Ա. Մ. ԳԱՐԱԳԱՇԵԱՆ

Պ Ա Յ Մ Ա Ն Ք

Ա. Գին միամեայ բաժանորդութեան Հանդիսիս՝ 25 դահեկան ոսկւոյ , հատուցանելի կանխաւ .

Բ. Ծախք թղթատարի ի գաւառս և յերկիր օտար՝ դահեկան արծաթոյ 6 ի տարւոյ .

Գ. Զգին բաժանորդութեան , զթուղթ և զամենայն գիր առաքել սլարտ է , յանուն խնամակալաց Հանդիսիս , առ Տ. Յովսէփ Գալաֆեան , գրավաճառ ի Կ. Պոլիս , ի Զաքարիայ .

Դ. Զմէն մի օրինակ Հանդիսիս մարթ է ստանալ 3 դահեկանաց առ ամենայն գրավաճառս Կ. Պոլսոյ :

Վ. Ա. Ճ. Ա. Ռ. Ի

Ե Ր Ի Յ Դ Ա. Հ Ե Կ Ա. Ն Ա. Յ



معارف نظارت جلیله سنک ۹۱۰ نومرولی رخصتنامہ سیلہ طبع اولتشدہ
